

Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, by S. DER NERSESSIAN. Jointly prepared for publication with Sylvia Agemian, with an introduction by A. Weyl Carr, Vol. 1, 2, Washington, 1993. 198 p., 666 ill. (Dumbarton Oaks Studies, XXXI).

Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ. Կիլիկիայի Հայկական քաղալորութիւն տասներկու-տասնչորսերորդ դարերի մանրանկարչութիւնը. հ. 1, 2, Վաշինգտոն, 1993, 198 էջ, 666 նկար:

1993 թ. վերջին Վաշինգտոնի Դումբարտոն Օքս ընդունող հիմնական կենտրոնը անդլերեն լեզվով որպէս «Դումբարտոն Օքս ուսումնասիրութիւններ» մատենաշարի երեսունմեկերորդ թողարկում լույս է ընծայել ականավոր հայագետ, հայ արվեստի մեծանուն գիտակ, Հայաստանի ԳԱ արտասահմանյան անդամ, ներկայումս հանգուցյալ Սիրարփի ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ (1896—1989 թթ.) «Մանրանկարչութիւնը Կիլիկիայի հայկական թաղավորութիւն մեջ, XII—XIV դարեր» երկհատոր աշխատութիւնը: Մասնագետների կողմից վաղուց սպասված այս երկասիրութիւնը մեր դարի հայագիտութիւն խոշորագույն նվաճումներից է՝ կոթողային մի դործ, որը կարող է պատկերները ցանկացած ժողովրդի Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ խնդրո առարկա մենագրութիւնը նախապատրաստել է վեց տասնամյակների ընթացքում (անշուշտ զուգահեռաբար պատրաստելով և հրատարակելով նաև այլ գրքեր), ինչ որ հազվագեպ է պատահում գիտնականների կյանքում: Այս աշխատութիւնը բացառիկ է, որովհետև առաջին անգամ աննախընթաց ծավալներով գիտական շրջանառութիւն մեջ է դնում հայ արվեստի ամենամեծ հարստութիւնը՝ կիլիկյան մանրանկարչութիւնը:

Կիլիկիայի գրքարվեստի հետազոտման ասպարեզում իրենց ավանդն ունեն նաև այլ գիտնականներ, ինչպէս օրինակ Գ. Հովսեփյանը, Լ. Ա. Դուռնովն, Տ. Ա. Իզմայլովան, Ա. Ն. Սվիրինը, Լ. Ռ. Աղարյանը, Վ. Ի. Ղաղարյանը և ուրիշներ, բայց կարծես թէ Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻն էր վերապահվել կիլիկյան մանրանկարչութիւն ամբողջական պատկերը ստեղծելու առաքելութիւնը: Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ողջ կյանքում աշխատել է վերականգնել հայ արվեստի ավերված ու ցրված տրված կիլիկյան փեմակի տեսքը, նրա պահպանված բեղիկները ի մի բերելով, լրացնելով, որքան որ հնարավոր է: Սա մի վիթխարի աշխատանք է, որն իր հեղինակից

պահանջել է միմյանց հետ կամրջել կողք-կողքի ստեղծված և նույն վանքում կամ ամրացում պահված, բայց ալմ աշխարհով մեկ սփռված հայկական մարդարտաշար մասունքները: Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ մեկի մեկի յար է միացրել հաղարավոր կտորների բաժանված ասես մեծ շքեղ դոհարի փշրանքները և վերստացել երբեմնի հրաշքի պատկերը:

Այս բնտիր աշխատութիւնը բացվում է Դումբարտոն Օքս կենտրոնի նախկին տնօրէն, նշանավոր հայագետ Ռ. Վ. Քոմսոնի համառոտ խոսքով, որին հետևում է ընդունողական գրքարվեստի հանաչված գիտակ Ա. Վեյլ Քարրի առաջարկները: Ա. Վեյլ Քարրը համառոտ ուրվագծում է Կիլիկիայի հայոց պատմութիւնը, նկարագրում թաղավորութիւն ստեղծումը, պատմութիւն կայացման և քաղաքական ձևավորման գործում Թուրքիայի, իսկ մշակութի ձևավորման խնդրում Հեթանոսների առաջատար գերը, ապա կաթողիկոսութիւն ղեկավարման հարցում Պաշտօնների որոշիչ ներկայութիւնը: Ա. Վեյլ Քարրը իրավացիորեն նկատում է, որ հայկական թաղավորութիւն երբեմնի բազմազան մշակութային ժառանգութիւնից որպէս կիլիկյան արվեստի վկայութիւն դուրս եկել են միայն ձեռագրերը, այսինքն՝ փաստորեն գիրքը Կիլիկիայում գտնվել և արվեստի պահպանող:

Ս. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ մենագրութիւնը բացվում է «XIV դարը՝ Դրապարկ, Հոմարկան և Սկեռան» խորագիրը կողք բաժնով: Կիլիկյան մանրանկարչութիւն հնագույն նմուշների հեղինակները մաս էին կազմում հայկական բնակչութիւն այն դանգվածների, որոնք բուն Հայաստանից, հարակից Կապպադոկիայից և Տավրոսի լեռներից Կիլիկիա էին արտագաղթում, իրենց միասնութիւն մեջ փնտրելով ապագա ապահով կյանքի գրավականը: Միջերկրականի ափերը տեղափոխվող հայ մանրանկարիչներն

ու գրիչները նորաստեղծ վանքերի մեջ սկիզբ էին հնում նոր շողերո գարթների և վերստին հիմնադրում էին ձևադրերի բազմազանացման գործը, նյնելով պահպանված մատյաններից, Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ Գրադարկի դրուստունը XII դարի կիլիկյան ղեկավարական կառույցում Հռոմկյանի և Սկևռայի շափ կարևոր դեր չի կատարել:

Ս. Տեր-Ներսեսյանը Հռոմկյանից հասած ձևադրերը բաժանում է երկու խմբի, որոնցից առաջինը ներառում է Հետևյալ լորս նմուշները. ա) 1166 թ. Ավետարանը (Ներսեսի Մաշտոցի անվ. Մատենագրան, ալբուհետե՝ ՄՄ), ձև. 7347, գրիչ՝ Կոզմա, ստացող՝ Առաքել և պիսկոպոս: Բ) 1173 թ. Գրիգոր Նարեկացու Սատան ողբերգության (ՄՄ, ձև. 1568), գրիչ՝ Գրիգոր, ստացող՝ Ներսես Ամբրոսացի: Գ) Կաթողիկոս Ներսես Ենքոնյանի համար առ նույն Գրիգոր գրիչ 1173 թ. սկսած և ապա 1174 թ. ի վաւերումն Գրիգոր Գ. Տղայի՝ հայրապետի շաղորդի ավարտած Ավետարանը (մինչև 1915 թ. Մեծ Սղևոնը գտնվել է Բոքատում և այժմ կորած է): Դ) Հռոմկյանցի Կարապետ Լախիկոպոսի համար Պողոսկան անապատում (Կատեն զղչակի մոտ) 1193 թ. ստեղծված Ավետարանը (Ռայխմսը, Վոլիերս Պատկերասրահ, ձև. 538), որի գրիչն անհայտ է: Վերոհիշյալ ձևադրերից միայն առաջինի և երրորդի հիշատակարաններում է Հռոմկյան նշված որպես բնագործական վայր: Նարեկացու Մատյանն անսուրբակությամբ գրված է Ներսես Ամբրոսացու ավուհանսար հանդիսացող Սկևռայում: Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, Նարեկացու Մատյանում նրան որպես ճշնավոր ներկայացնող էրրորդ գիմանկարը և՛ ոճով, և՛ մագաղաթի որակով խիստ տարբերվում է նույն ձևադրում զանվող բանաստեղծի մյուս երկու գիմանկարներից և հետագայի հավելում է: Ի տարբերություն այլ գիտնականների, Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ «Նարեկին» նկարիչ Գրիգորին չի կարելի նույնացնել 1197—1198 թթ. Ավետարանը (նախկինում գտնվել է Լվովում) ձևավորող Գրիգորի հետ, որովհետև երկու մանրանկարչների ոճերը կապես դանդաղանվում են միմյանցից:

Որպես հայ գրքարվեստի նոր որակ կիլիկյան մանրանկարչությունը առաջին անգամ դրսևորվում է վերոհիշյալ չորս մատյանների պատկերներում: Ժամանակի առավել բնագմանվոր արվեստագետներից մեկի՝ Կոզմա գրիչի ժառանգությունը այս գրքում ներկայացված է նաև 1205 թ. խաբերկրում բնագործակված և այդտեղից ոչ հեռու զանվող Բարպանջա անասատում 1219 թ. ստեղծված երկու Ավետարաններով (Վենետիկ, Մխիթարյան միաբանության գրադարան, Հետագայում Վենետիկ, ձև. 933 և ՄՄ ձև. 7734): Խնդրո առարկա հուշարձաններին կարող ենք այժմ ավելացնել Կոզմայի Կտորագրությունը պահած 1206 թ. Ավետարանը, որը ԱՄՆ-ում տեսել և պատկերները քննել ենք 1992 թ. ղեկավարել: Այն մի քանի տարի առաջ ձևը է բերել Գիթրոյի Ալեք և Մարի Մանուկյան թանգարանը: Այս երեք էլ շարտարակված ատորի մանրանկարները հիմնականում չորս անվանաթերթեր ու լուսանցարդեր են, որոնցից ատկապես առաջինները գրվել են նույնությամբ կրկնում են Կոզմայի մյուս մատյանների համապատասխան ձևավորումները:

Ստույգ կերպով Հռոմկյանի Հետ առնչվող ձևադրերը ցույց են տալիս վանքի գրատան խիստ կապան դերը Կիլիկիայի մշակութային կյանքում, հակառակ այն իրողության, որ աշխարհագրական առումով այդ կենտրոնը դուրս է եղել հայկական թաղավորության տարածքից: Բուն Կիլիկիայում առավել առաջնային նշանակություն է ունեցել Սկևռայի վանքը, որը ղեկավարել է ձգել այլ մենաստանների գրիչներին ու մանրանկարիչներին: Բաղավորության արևմտյան մասում գտնվող այս վանքը Հելլոմյանների ղեկգաստանի ավուհանսար հանդիսացող Լամբրոնի բերդի մոտ էր և աղղեցիկ տոմի իշխանները հովանավորում էին Սկևռայի մշակութային գործիչներին: Փառաբանված այդ մենաստանում է 1197—1198 թթ. Գրիգոր քահանան ավարտել հարևան Մլիճի վանքում սկսած Ավետարանը, որը մինչև Ներկորդ համաշխարհային պատերազմը պահվել է Լվովի հայկական արքեպիսկոպոսարանի գրադարանում: Բոլոր հայադետները, այդ թվում և Ս. Տեր-Ներսեսյանը, մինչև այժմ օգտվում էին անվանի բանասեր Ն. Ալիյանի 1930 թ. հրատարակած Լվովի ձևադրի պատկերների վերատպություններից և եկարագրությունից, որովհետև ներկորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ավետարանը անհետացել էր քաղաքից և շուրջ հինգ տասնամյակ կորած էր: Ինչպես շատ գիտնականների, այնպես էլ Ս. Տեր-Ներսեսյանին բախտ չվիճակվեց իմանալ, որ հրաշալի մանրանկարներով մատյանը չի ոչնչացել, այլ բոլորովին վերջերս գտնվել է Լեհաստանում՝ Պոլնանից ոչ հեռու Դենկոն քաղաքի մայր տաճարի արքեպիսկոպոսական արխիվում:

1 Հավանորեն, սա Ս. Տեր-Ներսեսյանի հիշատակած (էջ 11, ծան. 86) այն ձևադրն է, որը մինչև 1915 թ. Մեծ Սղևոնը պահվել է Կեսարիայի Ս. Մարիամ եկեղեցում:

կրկին նկարագրվել ու հրատարակվել գերմանացի պատմաբան Գ. Պրինցինգի կողմից²։

Գրախոսվող աշխատության մեջ Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ Սկեռայի ու Հոռմկլայի ձեռագրերը հնարավոր չէ դիտել իրեն զեղանկարչական երկու «դպրոցների» երկեր, գործածելով «դպրոց» հասկացությունը նույն իմաստով, ինչպես որ զա օգտագործում են արևմտյան միջնադարյան արվեստի վերաբերյալ, որովհետև. ա) մեզ հասած ձեռագրերը շատ չեն, բ) գրիչներն ու մանրանկարիչները մի վանքից տեղափոխվել են մյուսը և կամ ժամանակավորապես աշխատել այլ վայրերում։ Այստեղ Ս. Տեր-Ներսեսյանը շատ բովանդակալից քննության է ենթարկում իր կողմից Հոռմկլային վերագրվող և տարբեր արվեստագետների գործ հանդիսացող, բայց հիշատակարաններից գուրկ են չորս Ավետարաններ։ Դրանցից առաջինը պահվում է Վաշինգտոնում (Ֆրիթ Պատկերասրահ, 50.3), երկրորդը՝ Երուսաղեմում (Ս. Հակոբյանց վանք, հետագայում՝ Երուսաղեմ, 1796), իսկ երրորդը և չորրորդը Վենետիկում (141/102 և 888/159)։ Մեծավաստակ գիտնականի համոզմամբ, գրիչ Կարապետ Եղեմիացին Վենետիկի № 888/159 Ավետարանը ընթերցանակ է իր հարազատ քաղաքում։ Այդ տեսակետը հիմնավորելու համար Ս. Տեր-Ներսեսյանը համեմատում է Կարապետի երկու իղեհայտում ստեղծված 1161, 1171, 1174 թթ. Ավետարանների (ԱՄՆ, ԱՆՆ Առուր օտաթի Միլիգանի համալսարան, 141, ՄՄ 313. Դուլին, 254) նկարադրումների հետ։ Գիտնականը նշում է, որ 1161 թ. ձեռագրի գրիչ Վասիլին չի կարելի նույնացնել 1174 թ. հատորի Բարսեղ գրիչ հետ (Բարսեղը Բասիլ կամ Վասիլ անվան հայկական ձեռն է և այս երեք տարբերակները շատ ընդունված են եղել Կիլիկիայում)՝, ասինքն վերանայում է նախկինում հայտնած իր կարծիքը։

Գրախոսվող մենագրության երկրորդ գլուխը որը խորագրված է «Տոսներերերորդ դարը», Ի հերթին բաղկացած է երկու մասերից, որոնցից մեկը վերնագրված է «Դարի առաջին կեսի նկա-

րիչները՝ տարբեր գրչատներ», իսկ մյուսը՝ «Թորոս Ռոսլին»։

Կիլիկիայի գրավոր երկու մրցակից տոմարի՝ Հեթումյանների ու Ռուբինյանների պայքարի և 1201 թ. վերջիններս կողմից լամբրոնի գրավման հետևանքով XIII դարի սկզբին Սկեռան հավանորեն կորցնում է երկրի զեղարվեստական կյանքում ունեցած իր երբեմնի առաջնությունը։ Միայն XIII դարի վերջին է այդտեղ նորից աշխուժանում ձեռագրերի ընթերցանական գործը, երբ հայրենի վանք է վերադառնում Գևորգ Սկեռացին և երբ այդտեղ հիմնական գրիչ է դառնում Ստեփանոս Գույներիցանցը։

XIII դարի սկզբի մատյանների համեմատական շատ նկարադրողներ ունի Մամիստրա քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու վերակացու Թովմաս վարդապետի պատվերով նույն տեղում 1223 թ. Հովհաննես սարկավազի ընթերցանակած Ավետարանը (Ստամբուլ, Գազաթիս Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, № 35)։

XIII դարի առաջին կեսին Կիլիկիայի ուրիշ վայրերում՝ Դրաղարկում, Մաշկեռում, Արթակազին վանքում ընթերցանակված մյուս ձեռագրերը շատ պարզ նկարադրողներ ունեն, որոնցով հնարավոր չէ գաղափար կազմել այս կամ այն գրչատան ներսում իշխող զեղարվեստական որոշակի ավանդույթների մասին։ Կիլիկյան գրքարվեստի ոճն են արտացոլում թագավորության սահմաններից գուրս գտնվող, բայց նրա հետ թագմաթիվ թվերով կապված առանձին կենտրոններում ընթերցանակված մատյանների պատկերները։ Այդ կարգի գրչատներին մեկն է գործել Անտիոքի մոտ գտնվող Հևուանց վանքում։ Հիսուսի աշակերտներին նվիրված այդ մենաստանում ստեղծված գրչագրական հուշարձաններից մեկ են հասել երեքը։ Դրանցից մեկին՝ Փրինսթոնի (ԱՄՆ) համալսարանի Շայգե գրադարանի № 74 Ավետարանի (1219 թ., գրիչ՝ Կոստանգին) ճակատագրերն ու զարգացրերը, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, ժամանակի կիլիկյան մանրանկարչության ոճն են արտացոլում։ 1992 թ. Նոյեմբերին Փրինսթոնում հիշյալ ձեռագրի մեր կատարած քննությունը թույլ է տալիս կարծել, որ ճակատագրերն ու զարգացրերը իրենց նկարագրով միանգամայն տարբեր են ավետարանիչների գիմնականներից և տեքստական երկու պատկերներից (որոնց մասին Ս. Տեր-Ներսեսյանը չի նշում) և վերջիններս մեր համոզմամբ ստեղծված են XVII դարում։

Այս տարածքի լավագույն հուշարձանը Տեր Խաչատուրի պատվերով Զառնուկի մենաստանում (բուս Ս. Տեր-Ներսեսյանի այս վտերբ հավանարար առնչվում է Մալաթիա քաղաքից

² St' u G. Prinzing. Neue Funde, Ein verschollenes Prachtwerk der armenischen Buchmalerei in Gnesen wiederentdeckt. — Kunsichronik (München), 1993. Heft 6, Juni, S. 310—314.

³ St' u Saur Allgemeines Künstlerlexikon, Bd. 7, München—Leipzig, 1993. S. 193—199.

Հյուսիս գտնվող Ջառնուկ գետի ձևով 1245 թ. Սառգսի ընդգրկնակած Ձևնադրության գիրքն է (Վենետիկ, № 1657): Այս հատորի ձևավորումներն իրենց թե՛ ունով և թե՛ մոտիվներով ազդարարում են կիլիկյան ամենաբնորոք մանրանկարներին:

Գրիգոր Տղա կաթողիկոսին 1193 թ. հաջորդած Գրիգոր Կ, ապա Գրիգորիս Ապիրատ և Հովհաննես հայրապետների օրոք Հռոմկյան չիլերադանում Կիլիկիայի մշակութային, ղեկավարական կյանքում ունեցած իր ներմանի առաջատար գիրքը Միսյան Կոստանդին Ա. Բարձրերկրի կաթողիկոսի (1221—1267 թթ.) դահալայության տարիներին է, որ Հռոմկյայի գրչատունը հասնում է աննախընթաց նվաճումների: 1243 թ. Սիսի եկեղեցական ժողովի կանոնները արտահայտում են հայոց հայրապետի անձնական հոգածությունը հողերականներին գրչության գործում ավելի մասնագիտացնելու և վարպետ գրիչներին ու մանրանկարիչներին ընդգրկելու համար ձևադրերի մատակարարության մասին: Ս. Տեր-Ներսեսյանը իրավացիորեն նշում է, որ հայ գրքարվեստի զարգացման գործում Կոստանդին կաթողիկոսը կատարել է անհավանական դեր՝ նկարադարձ ձևադրեր անձնական պատվիրակով, դրանց մի մասը եկեղեցիներին ու վանքերին բնօրինակով, ինչպես նաև խրատուսակով ու ջանքեր գործադրելով, որ հողերականությունը նույնը անի: Այդ լուսավորիչ հայրապետը Հռոմկյա և հրավիրել այլ գրչատներում իրենց գործունեությունը սկսած վարպետներին և նրանց աշխատելու համարավորություն ավելի Կոստանդին հայրապետի շրջապատի նկարիչների խմբի ամենազործունեանցումը եղել է Կիրակոսը, որի ներկերից մեկն է հասել նրա ձեռքով գրված և նկարադարձված հինգ հատորներ: Ս. Տեր-Ներսեսյանը այստեղ վերջիններիս շարքն է տեղադրում Կոստանդին Բարձրերկրից ապամիջոց և ստույգ թվական չունեցող Գուրգենի № 558 Ավետարանը: Կոստանդին Ա-ի շրջանակի ներքոյում հմուտ վարպետ Սարգիս սարկապազն է, որը, ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, հայրապետի պատվերով հեղինակել է Կիրակոսի գրած և ձևավորած 1249 թ. Ավետարանի (ՄՄ, 7690) ավետարանիչների պատկերները: Հռոմկյայի եկեղեցիների փակակալ վարդան քահանայի համար Սարգիսը գրել ու ծագել է 1251 թ. Ավետարանը (ՄՄ, 3033): Հետաքրքիր է, որ այս վերջին ներքին գրքերի կազմարարը նույն անձն է՝ Վարդանը: Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, 1251 թ. մատյանի ավետարանիչների զմանկարների համեմատ, 1249 թ. ձևադրի ավետարանիչների պատկերները ավելի կատարյալ են, իսկ դա նշանակում է, որ վերջիններս Սարգիսի կողմից ավելացված

են 1255 թ.՝ Ավետարանը կազմելու ժամանակ: Կոստանդին կաթողիկոսի համար աշխատած Լորրոյը և ամենաօթաված գրիչը 1253 թ. Ավետարանը (Վաշինգտոն, Ֆրիք Պատկերասրահ, 44.17) ընդգրկնակող Հովհաննեսն է: Այս ձևադրերը նրանից պահպանված միակ գործն է նախկինում Ս. Տեր-Ներսեսյանը նույնացնում էր նրան Վիեննայի Միսիսարյան միաբանության գրադարանի (այսուհետև՝ Վիեննա) № 533 ձևադրի (պատվիրատու Կոստանդին Ա) ընդգրկնակող Հովհաննեսի ձևով, իսկ այժմ գիտնականները վերանայում է իր ին կարծիքը, սոսկ անվանակիցներ համարելով Լորիս վարպետներին:

Ս. Տեր-Ներսեսյանը նկատում է այն զարմանալի իրողությունը, որ կաթողիկոսի և բարձրաստիճան հողերականության համար ստեղծված վերոհիշյալ շքեղ գրքերը գործի են ավետարանական շարադրանքը ներկայացնող պատկերներից, մինչդեռ այդ կարգի ձևավորումները կան նախորդ շրջանի, այսինքն XII դարի ձևադրերում: Ամենայն հավանականությամբ, Կոստանդին Ա-ի շրջանակի նկարիչներին իր վարպետությամբ գիշող անանուն ծագողի 1223 թ. Գաղաթի Սաղի (Ստամբուլ) Ավետարանը նման նկարներ ունեցող միակ մատյանը չէր: Հռոմկյայից այդօրինակ գրքերի անհետացումը հավանորեն պետք է բացատրել մամուլների կողմից 1292 թ. կաթողիկոսի անվանիտի գրավումով և այդտեղ գտնվող մշակութային դանձրի կողոպուտով ու ոչնչացումով: Այս խմբում հատկանշական է, որ վերապրած վերոհիշյալ ձևադրերից մի քանիսը այդ ողբերկական լուսավորչական Հռոմկյայում չեն եղել, քանի որ մինչ այդ, հայոց հայրապետի կամ այլ անձանց կողմից նվիրվել են ուրիշ վանքերի:

Թորոս Թոսլինին վերաբերող բաժնում հեղինակը ներկայացնում է մեծ նկարիչ հայտնի ձևադրերը, այդ թվում և 1256 թ. Ջևրիկի Ավետարանից (ՄՄ, 10450) կտրված շրջափակը (հայկապ խորաններով (Թոստոն, մասնավոր հավաքածու), որոնք ԱՄՆ-ում էին գտնվում մեր դարի 40-ական թթ., բայց վերջերս են հրատարակվել և այն էլ ոչ բոլորովին):

Աշխատության այս մասում գիտնականը նմանորեն հետախուզում է Թորոս Թոսլինի մատյանների էջերը, երևան հանելու համար, ինչ որտեղ է վերջանում միջին մեծ վարպետի ոճը և սկսվում նրա օղնականների աշխատանքային, ինչպես է գերազան նրա արվեստը գործ-

4 Տե՛ս Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts. Ed., by Th. F. Mathews and R. S. Wiecek, New York, 1994, pl. 10—12, p. 206.

ընկերների արածի համեմատ, որն է դույնների ու գծի կախարդ նկարչի ներդրումը հայ մանրանկարչության մեջ և նրա երկերի արժեքը, ինչպիսին են զրանց առնչությունները ուրիշ ժողովուրդների ստեղծագործությունների հետ։ Ս. Տեր-Ներսեսյանը ցույց է տալիս, որ Կոստանդին Ա կաթողիկոսի մասվամբ (1267 թ.) և Թորոս Ռոսլինի մասվամբ կամ մեկնումով Հռոմկլայի գրչատան գործունեությունը ավարտվում է 1268 թ. մինչև շարաբաստիկ 1292 թ. բնկած ժամանակահատվածում Հռոմկլայում ընդգրկված որևէ ձեռագիր չի պահպանվել։ Եթե այդպիսիք նույնիսկ եղել են, ապա զրանց մի մասը ոչնչացվել է վանքի վերահիշյալ կողոպտման ժամանակ։ Ս. Տեր-Ներսեսյանին թվում է, որ Կոստանդին Ա-ի հաջորդները նրա շափ հետաքրքրություն չեն ունեցել շքեղ ձեռագրերի ստեղծման նկատմամբ։ Շատ կարևոր է մեծավաստակ գիտնականի նկատողությունը այն մասին, որ կաթողիկոսի հովանավորությունից և Ռոսլինի առաջնորդությունից զրկված գրիչներն ու ծաղկողները աշխատանք են որոնել այլ վանքերում, որտեղ դեռևս շարունակում էին զրբեր գրել ու նկարազարդել։ Աշխատության այս գլխի շարադրանքից պարզ երևում է, որ Թորոս Ռոսլինը հսկայական ավանդ ունի հայ գրքարվեստի պատմության մեջ։

Գրախոսվող աշխատության երրորդ գլուխը կրում է «Տասներեքերորդ դարը, Գոնեթի գրչատունը և նրա հետ առնչվող ձեռագրերը խորագիրը»։ Հայտնի է, որ հակառակ քաղաքական անբարենպաստ հանգամանքների, մասնավորապես Եղիստոսի մամուլների պարբերական հարձակումների (1266, 1275, 1292 թթ.), Մ111 դարի երկրորդ կեսը նշանավորվում է մշակութային և գեղարվեստական աննախընթաց նվաճումներով։ Այդ ծաղկումը պայմանավորված է արքայական ընտանիքի և ազնվականության, ինչպես նաև հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչների մեկենասական գործունեությամբ, որոնց համար օրինակ էր ծառայել Կոստանդին Ա կաթողիկոսի վերաբերմունքը մշակույթի դործիչների նկատմամբ։ Գրքարվեստի զարգացմանը նպաստել է նաև թշնամու հարձակումներից հարաբերականորեն ապահով մնացած հյուսիսային լեռնային տարածքների մենաստանների վանահայրերի հոգածությունը գրիչների և մանրանկարիչների հանդեպ։ Նման մի կենտրոն է եղել Գոնեթի վանքը, որի մշակութային վերելքը համընկնում է Հեթում I արալի եղբոր՝ Հովհաննես եպիսկոպոսի վանահայրության շրջանին։ Փաստերը վկայում են, որ նրա հիմնական հետաքրքրությունը գրչատան աշխատանքներն առաջ տանելն էր և վանական հարուստ գրադարան ստեղ-

ծելը։ Հովհաննես արքանգրայրը թե՛ ղեկավարում էր գրիչների ու մանրանկարիչների աշխատանքները և թե՛ անձամբ ձեռագրեր ընդօրինակում։ Նրան ենթակա վարպետները կենտրոնացած էին Գոնեթում, ուր հիմնական գրչատուն էր և վերջինիս հարևան խոսնկա և Տիրոջ վանքերում։ Շուրջ տասներկու գրիչների անուններ են պահպանված Հովհաննեսի հետ առնչվող ձեռագրերում և հազիվ մի քանի մանրանկարիչների անուններ։ Գոնեթի հատորներից առաջինը 1263 թ. ընդօրինակված Ավետարանն է (Վաշինդտոն, Ֆրիդ Պատկերասրահ, 56.11), որի գրիչն է Թորոս քահանան, իսկ մի քանի ծաղկողներից պահպանվել է միայն Կոստանդին անունը։ Կիլիկիայի գրքարվեստի այս փայլուն օրինակի կոգքին Ս. Տեր-Ներսեսյանը մի շարք կարևոր բացահայտումներ է անում, որոնք էական են այլ երկրների ստեղծման վայրը, ժամանակն ու հեղինակը պարզելու խնամով։ Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, խոսնկայում Հովհաննես արքանգրոր համար են ընդօրինակվել ՄՄ ՊՁՁ 4243 և 345 ձեռագրերը՝ 1263 թ. սկսված և 1266 թ. ավարտված Հին ու Նոր Կտակարանների բնութի գրքերն ընդգրկող ժողովածուն (գրիչ՝ Ստեփաննոս Վահագի) և Բարսեղ զրչի հեղինակած Աստվածաշունչը (որի գիտնականը թվագրում է 1270 թ.)։ Դրանց և 1270 թ. նույն վայրում սկսված ու Ծիծեռնաբույնում Բարսեղ զրչի ավարտած Ավետարանի (ՄՄ, 4515) պատկերներում Ս. Տեր-Ներսեսյանը նշմարում է նույն մանրանկարչի՝ Հովասափի աշխատանքանակը և այդ ձևավորումները վերադրում վերջինիս։ Այստեղ հստակ ուրվագծվում է, որ ի դեմս Հովասափի գործ ունենք Թորոս Ռոսլինի ժամանակակից և նրանից հետո ստեղծագործել շարունակող կիլիկիան երկրորդ ականավոր նկարչի հետ, որը նույնպես մեծ ազդեցություն է թողել հետագա վարպետների ոճի վարդապետական վրա։

Ս. Տեր-Ներսեսյանը Հովասափի վրձնած մանրանկարները, այսինքն՝ նրա մասնակցությունը նկատում է շուրջ հինգ ձեռագրերում և այդպիսով սահմանադատում նկարչի գեղարվեստական ժառանգությունը։ Մենագրության հեղինակի կարծիքով Գոնեթի գրչատունը աստիճանաբար անկում է ապրում Հովհաննես արքանգրոր վախճանից հետո (1289 թ.)։

Այս աշխատության շրջրորդ գլուխը, որի խորագիրն է «Տասներեքերորդ դարը, արքայական և իշխանական ձեռագրերը նվիրված է հայ արվեստի պատմության ամենափառավոր և ամենակենդան շրջանի լուսարամմանը Այստեղ քննության առարկա են դառնում առանձին լուսարամուկ ընտանիք կազմող մի խումբ մատաններ։ Դրանց նկարազարդումները շատ ընդ-

Հանրություններ ունեն թորոս Ոռսլինի, Հովհաննես արքակերպոր ու նրա զործընկերների երկերի հետ, բայց միաժամանակ բոլորովին ապրեր են Հոսմկյալի, նաև Գոնեի ու Զարակից շրջանների զրչատների զեղարվեստական ժառանգությունից: Անասկանայի պատճառներով արքաների ու իշխանների համար աշխատած գրիչների անունները և նրանց երկերի «ծննդավայրեր» շատ հազվադեպ են նշված մատյանների հիշատակարաններում, իսկ ծագողների անունները առհասարակ չեն պահպանված: Գիտարկված պալատական ձևազարդեր ոչ միայն հայ, այլև համաշխարհային արվեստի մեծածախ դանձր են և աշխատանքների կորուստը սգակողական երևույթ է, ժողովրդի պատմական հիշողության կարևոր զրկագների կորուստ: Հիշյալ մատյանների ձևավորումներում զրանգոված զեղանկարական ուղղությունը, սկիզբ առնելով Կեսան թողություն 1272 թ. Ավետարանի (Ռուսագիմ, սր. Հակոբանց վանքի հավաքածու, 2563) դյուլի պատկերներից (որոնց հեղինակը զմայնարար հայտնի չէ), այդուհանդերձ կտրված չէ նախնական շրջանի արվեստից և որոշակի մեծավորություն ունի Թորոս Ռուսլինի վերջին զործերի հետ: Այստեղ շարադրանքը լինել հիմնականում հյուսվում է Կեսանի Ավետարանի շուրջ, բայց այնուամենայնիվ զծվար չէ նկատել, որ ամենից ապիլի Ս. Տեր-Ներսեսյանը ներկայացնում է վերլուծում է Հեթում II արքայի համար 1286 թ. ընդգրկնակված ճաշոցի (ՄՄ, 979) մանրանկարները: Հիշյալ հատորը XIII դարի ամենահստիկ և շեղ զարդարված ձևազարդից է, ունի հարյուրավոր պատկերներ, որոնք կոթողային հեղինակություն են հաղորդում հուշարձանին: Վերջինիս կողքին հանդամանայի քննության և արժանացած XIV դարի սկզբին Սիսի արքայական զանձարանում պահված Ավետարանի (ՄՄ, 7651) մանրանկարները, որոնք հիմնականում ստեղծված են XIII դարի վերջին ռադորդին մի խումբ վարպետների ջանքերով և ամբողջացված են 1320 թ. կիլիկյան նախնա զեղանկարի Սարգիս Պիծակի կողմից: Ս. Տեր-Ներսեսյանը ճշգրտում է այս ձևազարդերի խմբին պատկանող և Հովհաննես արքակերպոր անձնական զղտադորձման համար, մասամբ նրա իսկ ձևավոր ընդգրկնակված Ավետարանի (ՄՄ, 197) լիակատր, զանելով, որ այն պետք է լիարժեք ոչ լի 1287 թ., ինչպես մինչ այժմ համարվում էր, այլ՝ 1289 թ.: Գիտնականը կարծում է, որ անվիակիր պալատական մատյանները հարկ է տեղադրել Կեսան թողություն 1272 թ. Ավետարանի և Հովհաննես արքակերպոր 1289 թ. Ավետարանի միջև ընկած ժամանակահատվածում, ելնելով ձևազարդերի մանրանկարների ոճական հասկանիչներից և

պատվիրատուների կենսագրական մանրամասներից: Հատուկ ուշադրության է արժանի մենագրության հեղինակի աշխատանքները, որ Սիսի զանձարան վերահիշյալ մատյանի հայպես կոչված, Բուք նկարիչների Ավետարանի, առանձին պատկերները, նաև Հեթում II արքայի 1256 թ. ճաշոցի և Թորոս Ռուսլինի նկարազարդումները զաղափար են տալիս XIII դարի վերջի Կիլիկիայի մանրանկարիչների զորավոր երևակայության մասին: Այդ վարպետների զործերը հարստությամբ և բազմազանությամբ զերազանցում են նախնիներու հայ նկարիչների ունեցած բոլոր նվաճումները:

Մենագրության հեղինակը զուխր կրում է «Տասներեքերորդ զարի վերջից մինչև տասներեքերորդ զարի և Սարգիս Պիծակի» խորագիրը: Հեղինակի կարծիքով այս սիուլի առավել ընտրի ձևազարդեր անհետացել են թերևս զառնաղետ 1292 թ. Հոսմկյալի զրավման ժամանակ: XIII դարի վերջին տասնամյակները ընդհանրապես նպաստավոր չեն եղել լիակարծեք զրերի ստեղծման համար: 1285 թ. կնքված հայտությունը ծանր պայմաններ է պարտադրում Կիլիկիային, իսկ 1289 և 1293 թթ. արաբների լրացուցիչ պահանջով հայերը ստիպված են լինում մեծ զուսմաներ վճարել՝ երկրի նոր զրավումը կանխելու համար: Գահի համար արքայական ընտանիքի անդամների մղած եղբայրասպան կռիվները իրենց հերթին թուլացնում են արտաքին լինամու զեմ պաթարի կազմակերպման զործը: Մյուս կողմից կաթոլիկ եկեղեցու հետ միարանվելու Հեթում II արքայի ու նրա եղբայրների ձղտումները ուժեղ զմայնություն և զզգուհություն են հարուցում հողերականություն ու ժողովրդի մեջ, զլատում երկրի պաշտպանության համար անհրաժեշտ միանանկանությունը: Այս բաժնում առաջին անգամ զիտական շրջանառության մեջ են զրվում ցարդ անձանթի և Ստամբուլում, Բելյուլում, Երուսաղեմում և այլ վայրերում զանվող ձևազարդերի մանրանկարները, առանձնացվում է ժամանակի մի քանի կարևոր մանրանկարիչների՝ Թորոս Պիլիսոփայի, Գրիգոր քահանայի (Սարգիս Պիծակի հոր), Ստեփանոս Գույներիցանցի, Լեոն Լադրցու և այլ վարպետների զեղարվեստական ժառանգությունը: Հատկապես ծանրակշիռ է Սարգիս Պիծակի վաստակը Ս. Տեր-Ներսեսյանի զիպուկ արտահայտության համաձայն, թաղավորության բարձրաստիճան հողերականների հովանավորության և իր անխոչ քանասիրություն շնորհիվ Սարգիս Պիծակի լիվում է, թե զղավելը է ժամանակի կարևորագույն զեղարվեստական պատվերները (շուրջ հիսուն ձևազարդեր են ստորագրված նրա կողմից կամ կարող են վերագրվել նրան): Ս. Տեր-Ներսեսյանի զըր-

քում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Պիծակի՝ տարբեր երկրների հավաքածուներում գտնվող հայտնի և անհայտ մի շարք մատյանների մանրակարգները՝ սմբողջական պատկերացում տալով նրա ստեղծագործության մասին:

Ս. Տեր-Ներսեսյանի աշխատության վերջին գլուխը խորագրված է «Դիմանկարներ» և նվիրված է XIII—XIV դդ. հայ արքաներին, թագուհիներին, հայտնի իշխաններին, հոգևորականներին ու նկարիչներին ներկայացնող պատկերների քննությունը: Այստեղ զբոծ ունենք միջնադարյան արվեստում հազվագեղ պատահող երևույթի հետ, երբ նույն անձը նկարվել է իր կյանքի տարբեր տարիներին: Հայոց պատմության և մշակույթի նվիրական մասունքներ են լեոն II արքայի հինգ, Հովհաննես արքանդքոր շորս, Հեթում I-ի մյուս եղբոր՝ վասակ իշխանի և որդիների, լեոն IV-ի, Մարիուն թագուհու, նրա դստեր՝ Յիմիի, Հակոբ Բ կաթողիկոսի դիմանկարները, Սարգիս Պիծակի երեք ինքնանկարները և այլ մեծատոհմիկների պատկերները:

Գրախոսվող մենագրությունը ավարտվում է կիլիկյան առավել մեծարժեք և բազմակարգ երեք ձևագրերին նվիրված երեք հավելվածներով, որոնք հաջորդաբար նշում են Կեռան թագուհու 1272 թ. Ավետարանի, ապա Հեթում II արքայի 1286 թ. ճաշոցի լուսանկարները և տալիս ՄՄ Խ 7631 մատյանի՝ «Ութ նկարիչների Ավետարանի» պատկերների քննությունը:

Նոր հրատարակությունը ամբողջանում է օգտագործված զրականության ցուցակի, ինչպես նաև հատուկ անունների և առարկայական ու պատկերագրական թեմաների միացյալ ցանկի շնորհիվ:

Աշխատության երկրորդ՝ պատկերներն ընդգրկող հատորը բաղկացած է 666 սև ու սպիտակ, ինչպես նաև գունավոր վերատպություններից: Այս հսկայական փաստական նյութը երկրորդ հատորին հաղորդում է առանձին, ինքնուրույն արժեք, որովհետև մեծապես կարող է խթանել և արագացնել կիլիկյան գրքատրվեստի հետագա հետազոտությունը ողջ աշխարհում, մասնադեպերի տրամադրության տակ ղեկավարված մեծ մասամբ չհրատարակված բազմաթիվ պատկերներ: Դժբախտաբար, գունավոր վերատպությունները այնքան անհաջող են, որ ոչ թե պարզապես նսեմացնում են փառապանծ գեղարվեստական ժառանգությունը, այլև թույլ տալիս աշխատությունը դասել... հայ արվեստին նվիրված և առավել վատ հրատարակված փոքրաթիվ գրքերի առաջին շարքին: Հայկական հրապարակների նսեմացումը, ավագ, սկսվում է հատորների շապիկներից: Դրանց համար Բորոս Լեոնիկի բազմաթիվ

մանրակարգներից ընտրված է վնասված և անհաջող մի նմուշ և Սարգիս Պիծակի մի պատկեր, որոնք բնավ չեն պարզեցնում այն հոգեկան վայելքը և հափշտակությունը, որն ունենում են կիլիկյան գրքատրվեստի առավել հրաշալի նմուշներից: Այսպիսի վատ հրատարակական որակը բնորոշ է բյուզանդական արվեստին նվիրված «Դումարատուն Օքս Խուսմասիրություններ» մատենաշարի երեսուն նախորդ հրատարակություններին և ընդհանրապես Դումարատուն Օքս կենտրոնի կողմից լույս ընծայված գրքերին: Իհն է սա, պատահական անուշադրություն ու անփութություն, թե՛ միտումնավոր վերաբերմունք:

Գրախոսվող հրատարակությունը զերծ չէ նաև որոշ վիճահարույց մանրամասներից ու անճշտություններից: Այսպես, օրինակ, իր նախարանում Ա. Վելլ Բարրը նշում է, որ Սարգիս Պիծակից պահպանվել են 43 ձևագրեր (էջ XIV), իսկ Ս. Տեր-Ներսեսյանը 50-ից ավելի մատյաններ է հիշատակում, որոնք ստորագրված են նկարչի կողմից կամ կարող են վերագրվել նրան: Այդ շուրջակի կարելի է ավելացնել նաև այլ օրինակներ: Մենագրության 44-րդ էջի 55-րդ ժանթագրության մեջ կարդում ենք, որ Մյունխենի Բավարական գրադարանի հայկ. Ֆ 16 Ավետարանը գրված է Գոնե-րում 1278 թ. Հեթում արքայի եղբայր և Գոնեի վանահայր Կոստանդին Եպիսկոպոսի կողմից, մինչդեռ այն ընդօրինակված է Հովհաննես արքանդքոր ձեռքով (էջ 84):

Աշխատության 126-րդ էջում պատմվում է 1307 թ. Անադարա ամրոցում մոնղոլ իշխան Փիլարդունի կողմից լեոն IV արքայի զավադաբար սպանվելու մասին, իսկ 159-րդ էջում ներկվում է, որ 1331 թ. լեոն IV արքայի համար Սարգիս Պիծակը ընդօրինակել ու ծաղկել է Անտիոքի Ասիդները և ապա, քիչ ցած, ավելացվում է, թե այդ ձեռագրում զետեղված է լեոն IV-ի պատկերը: Այստեղ որոշ շփոթություն կա՝ Իրականում Փիլարդունի սպանել է ավել Հեթում II արքայի եղբայր Բորոսի որդուն՝ լեոն III-ին (1301—1307 թթ.), իսկ Պիծակի մատյանը ստեղծված է Օշին թագավորի (1308—1320 թթ.) որդի լեոն IV-ի (1320—1342 թթ.) համար:

Անշուշտ այս երևույթները չեն նսեմացնում նոր հրատարակության արժեքը: Հարկ է նշել, որ

Յ Տե'ս մեր զրախոսականը Վ. Ղազարյանի «Սարգիս Պիծակ» գրքի մասին. — «Երաբեր հասարակական գիտություններ», 1981, № 6, էջ 116—118:

՝ Տե'ս C. Mutaflan. Le Royaume Armenien de Cilicie. X^e—XIV^e siècles. Paris, 1993, p. 73, 80, 144—145.

վերջինիս ամբողջացման ու պատրաստման համար մասնագետները պարտական են Բելլուսի Սյուրսոկ թանգարանի աշխատակից, հանաչված արվեստաբան Ս. Աննամյանին, որը հոանդուն նվիրվածությամբ տեսական աջակցություն է ցույց առնել կյանքի վերջին տարիներին վատառողջ Ս. Տեր-Ներսեսյանին: Ս. Աննամյանի օժանդակությունն ապահովելու գործին սատարել են Սյուրսոկ թանգարանի տնօրեն Լ. Մելրին, Սևեթ Տսնն Կիլիկիո, ներկայումս Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-ն, իսկ հրատարակչական ծախսերին մեծ չափով մաս-

նակցել են Ս. Տեր-Ներսեսյանի մերձավոր բարեկամներ փարիզաբնակ իրավաբան Մ. Նաֆիլյանը, և մասնավորապես՝ Գրիգոր Զոհրապի դուստրը այժմ հանդուցալ Գուրբեա Զոհրապ Լիբմանը:

Այս հոտակա աշխատությամբ բնեցող-սեղանին է զրվել կիլիկյան մշակույթի մի կարևոր բնագավառի երեք դարերի պատմությունը, որը մինչ այժմ ամբողջովին ձանձվել էր և ահա մատուցվեց մասնագետներին:

Լ. Բ. ՉՈՒԿԱՍՉՅԱՆ